

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի այս ԺԶ. հատորը իր նախորդներէն կը տարբերի իւրայատուկ բնոյթով, քանի նուիրուած է Հայ Աւետարանական Եկեղեցիին ծննդեան 150ամեակին:

Հայ Ազգային Եկեղեցին ներքնապէս վերանորոգելու յանձնառութեամբ ճամբայ ելած Հայ Աւետարանական Շարժումը երախտաշատ գործ կատարած է իր ժողովուրդին ծոցին մէջ, յատկապէս հոգեւոր եւ կրթական-դաստիարակչական մարզերէն ներս:

Քրիստոնեայ աշխարհին մէջ՝ չկա՛յ Եկեղեցի մը, որ դարերու հոլովոյթին հետ մնացած ըլլայ միասնական՝ իր դաւանանքով ու Աթոռներու միութեամբ: Նոյնն է նաեւ Հայ Եկեղեցիին պարագան: Ափսոսալի իրականութիւն, բայց իրականութիւն:

Հայ Աւետարանական Եկեղեցիին նման Շարժումները երեւան կու գան երբ Եկեղեցիներուն մինչ այդ արթուն Հովիւներ կը յուլանան: Աստուծային Պատգամը ունակութիւն կը դառնայ անոնց մօտ, որոնք քէն ճշմարտութեան ջահն ունին, բայց զայն կը պահեն ընդ գրուանաւ:

Այսպիսի Շարժումներ եթէ Աստուծմէ չեն, ժամանակը շնչասպառ պիտի ընէ եւ առնէ տանի գանոնք: Իսկ եթէ Աստուծմէ են, Աստուծոյ ծրագրին պիտի ծառայեն՝ Աստուծոյ խորհուրդներէն ներշնչուած գործերով:

Այն Շարժումները, որոնք Հայ Աւետարանական Եկեղեցիին նման ծնած են Հայ Եկեղեցիին ծոցէն, պիտի վերադառնան Հայ Եկեղեցիին ծոցը, երբ իրենց առաքելութիւնը աւարտեն: Boomerangի նման:

Հայ Աւետարանական Եկեղեցիին այս պատմական Յոբելեանը յետադարձ ակնարկ մըն է դէպի անցեալի նուաճումները, վերլուծում մը՝ իր ներկայ կացութեան եւ առաջադրանք մը՝ ապագայի հեռանկարներով: Վերջին հաշուով՝ պայծառ արդարացում մը իր 150ամեայ գոյութեան:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Դոկտ. Արշալոյս Հ. Թովալեան

Լեւոն Վարդան

Ժիրայր Դանիէլեան

Անդրանիկ Տազէսեան

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Հայր Անդրանիկ Վրդ. Կոանեան

Խմբագրութիւնս յապուկ շնորհակալութիւն կը յայտնէ Հայ Աւետարանական Խորհրդակցական Մարմնին Վեր. Յովհաննէս Գարճեանին, Դոկտ. Ժան Խանճեանին եւ Վեր.-Դոկտ. Փոլ Հայրոսեանին, հապորիս հրապարակութեան առթիւ իրենց քերած կարեւոր մասնակցութեան համար:

REFLECTION

Haigazian Armenological Review volume XVI differs from its previous publications by its unique nature, since it is dedicated to the 150th anniversary of the Armenian Evangelical Church.

With its mission to internally revive the Armenian National Church, the Armenian Evangelical Movement has done a gratifying job in the midst of its people, specially in the educational and the spiritual areas.

There has been not a single church in the Christian World, that through the centuries has remained united in its faith and the union of its sees. The case is the same with the Armenian Church. A regrettable fact, but a fact all the same.

Movements like the Armenian Evangelical Church manifest themselves when leaders who have been attentive since then lose interest. Though they still carry the torch of truth, they keep it concealed because God's message has become commonplace to them.

If these movements are not inspired by God, in time, they lose momentum and die out. But if they are Godly, they serve God's message with inspired work.

Those movements which like the Armenian Evangelical Church are born in the bosom of the Armenian Church, will return to it, after accomplishing their mission. Like a boomerang.

The historic jubilee of the Armenian Evangelical Church is a retrospective of its past accomplishments, an analysis of its present and an undertaking about its future prospects. In one word, it is a brilliant assertion of its 150th existence.

EDITORIAL STAFF

EDITORIAL STAFF

Dr. Arshalouys H. Topalian
Levon Vartan
Jirair Tanielian
Antranik Dakessian

EDITOR-IN-CHIEF

Father Antranik Granian

ACKNOWLEDGEMENT

The editors would like to express their gratitude to the members of the Armenian Evangelical Advisory Committee, Rev. Dr. John Khanjian, Rev. Hovhannes Karjian and Rev. Dr. Paul Haidostian, for their contribution to the publication of this volume.